

րեանց: 22 Եւ սփեւստեսն փակեր գրուրս վկայանցին, եւ ի կողմն եղեալ յիւրում տեղուջն, յանկարծակի դարձեալ երեւեցաւ նմա, զի բացան դրունք վկայանցին, եկին կուտեցան, եւ լի եղեւ վկայանցն նոքին¹ վկայիւք: 23 Եւ ելանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ, եւ տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կարգաւ յարիներալ բոլորէին կարգէին ի նստել: 24 Ապա գային սուրբքն Սարգիս եւ Թեոդորոս երկոքեան ի գործոյն՝ յոր առաքեալ էին, եւ մտանէին ի ժողովս սրբոցն: 25 Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ Ո՛րպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք: 26 Պատասխանի տուեալ ասէին, թէ Էր իսկ յորժամ ի ձեւջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեանն գ՛ւաղէս. եւ ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ՝ եկեալ եմք աւասիկ առ ձեզ: 27 Եւ յարուցեալ գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն զՏեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. եւ ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս: 28 Եւ յահի մեծի լիներ սփեւստեսն մինչեւ յայգ յառաւաւտն²:

29 Ապա իբրեւ այգ եղեւ, եկին մագիստրիանոսքն, ասեն ցտփեստն. Արի՛ գնասցուք առ կայսրն: 30 Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞ երթիցուք: 31 Եւ բազում վիճումն ի մեջ եղեալ նոցա վասն այսր բանիս եւ գրաւական եղեալ ի մեջ վասն այսր բանիս մինչեւ յերիս աւուրս: 32 Եթէ ոչ, ասէ, հարցին աւար վաճառք, եւ քաղաքք յափշտակեցին, ես՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ զլիսատեցայց, զի իշխեցի զայս ճառել: 33 Ապա թոյլ տային նմա մագիստրիանոսքն մինչեւ յերիս աւուրս. եւ յետ երից աւուրցն ստուգեցաւ զրոյցն, զի մեռեալ էր կայսրն:

34 Ապա յետ այսորիկ արձակեցան ամենայն որ միանգամ ոք կայր ի պատիժս կամ յաքսորս. եւ դարձան ուրուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք: 35 Սոյնպէս եւ զկեսարացոցն հրաման ետուն տալ զիւրաքանչիւր իրաց. եւ կոչեցեալ սրբոյն Բարսղի, զի զիւրաքանչիւր առցեն, եւ ոչ կամէին հուպ լինել: 36 Չի թեպէտ եւ ասեր ցնոսա Բարսեղ՝ եթէ ահաւասիկ երաշխաւոր իմ թափեցաւ ձեզ, զի ասացի՝ թէ եւ տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր: 37 Եւ ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այդ ի գանձ Տեառն երթիցէ, որ դատեցաւ զդատաստանս մեր, եւ ինդրեաց վրեժ սուրբ եկեղեցւոյ ուխտի իւրոյ: 38 Եւ ոչ ոք ի կեսարացւոց անտի հպեցաւ յարձաթ իւր, եւ ոչ մի ոք. բայց թողին զայն ի գանձ եկեղեցւոյն: 39 Ապա Էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւագանս մկրտութեան կնքոյ տալոյ. եւ կան հաստատեալ աւագանքն արձաթիք ի տուն լուսարանին մինչեւ ցայսաւր ժամանակի:

1 Օրինակ մի՛ նոքիւք

2 Օրինակ մի՛ ցայգ առաւտն